ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք.Երևան « 26 » մայիսի 2021թ.

ՀՐԱՄԱՆ № 0166-Ա

ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 41-27.1-Մ1-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ1-1) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2021 թվականի մայիսի 25-ի եզրակացությունը և Կարեն Հակոբյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կարեն Կամոյի Հակոբյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ1-1) պաշտոնին:

2. Փորձաշրջանի ընթացքում Կարեն Հակոբյանի փորձաշրջանի համակարգող նշանակել Վարույթների և իրավական ապահովման բաժնի պետ (ծածկագիր՝ 41-27.2-Ղ3-1)՝ Գյուլնարա Սարգսյանին:

3. Կարեն Հակոբյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2021 թվականի մայիսի 27:

Ս.ԴԱՎԹՅԱՆ